ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 նոյեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

163
(2643)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 134

2022 թվականի հուլիսի 12-ին կառավարության կողմից հայտարարություն տարածվեց, թե Նիկոլ Փաշինյանը «Ռոսատոմ»-ի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովի հետ քննարկել է Հայաստանում նոր «ատոմային էլեկտրակայանի կառուցման հնարավորություններին վերաբերող հարցեր»: Ավելի վաղ՝ 2021-ի նոյեմբերին, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն էր նշել, որ կառավարությունը 2026-2027-ին նախատեսում է նոր ատոմակայան կառուցել: «Դա նշանակում է, որ մինչեւ 2036 թվականը պետք է պատրաստվել եւ իրականացնել նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքները»,- ասել էր Սանոսյանը՝ հավելելով, որ կառուցման աշխատանքները կտեւեն 7-8 տարի: Ուշագրավ է, որ մինչ այդ այլ հայտարարություններ են եղել. 2019 թվականի դեկտեմբերի 10-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը լրագրողների հետ զրույցում հայտարարել էր, թե նոր ատոմակայան կառուցելու հարց չի քննարկվում, իսկ Նիկոլ Փաշինյանն էլ իր հերթին 2021-ի ապրիլին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպմանը, հայտարարել էր, թե ցանկանում է «քննարկել Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման հնարավորությունը»: Այսինքն՝Նիկոլ Փաշինյանն ու իր թիմի անդամները հերթական անգամ անում են մոլորեցնող հայտարարություններ, հերքում իրենք իրենց եւ դրանով խաբում ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Ընտրակեղծիքները մերժող հեղափոխական երիտասարդները, պարզվում է, իրականում ընտրակեղծարարներ են, պարզապես դրա համար հնարավորություն չեն ունեցել: Երբ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը իշխանության եկան, բացահայտվեց նրանց՝ իրական կեղծարարների դեմքը: Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 29-ին կայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամների ընտրություններում լուրջ կեղծիքներ են եղել, եւ որոշ անդամների ձայներ հայտնվել են այլոց անունների վրա: Հիմա պարզվում է՝ իշխանականները հայտնվել են հայրենի իրավապահների ուշադրության կենտրոնում: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ ՀՀ իրավապահ համակարգը սկսել է ուսումնասիրել բոլոր հրապարակումները, որոնք արվել են իշխող կուսակցության ներսում գրանցված կեղծիքների վերաբերյալ, եւ որոշել է գործի անցնել: Երկուշաբթի օրը իրավապահ կառույցներից մեկը որոշել է պարզել, թե ով, ինչ եւ ինչպես է կեղծել՝ ընտրությունների արդյունքների ցանկալի պատկեր ունենալու համար: Սա նշանակում է, որ առաջիկայում ՔՊ վարչության անդամ պատգամավորները, նախարարները եւ այլ պաշտոնյաներ, ինչպես նաեւ վարչության անդամ չընտրված թեկնածուները հերթով կկանչվեն ուժային կառույցներ՝ բացատրություն տալու: Իհարկե, գեղեցիկ է հնչում, որ իրավապահները մտնելու են ՔՊ՝ արդարություն վերականգնելու, բայց դա որ իրավունքով եւ որ օրենքով են իրագործելու, հայտնի չէ: «Ժողովուրդ» օրաթերթը չկարողացավ առայժմ պարզել նաեւ, թե որ իրավապահ կառույցն է կոնկրետ որոշել քաղաքական իշխանության ներքին խոհանոցում բացահայտումներ անել: Գլխավոր հարցը այս պահի դրությամբ հետեւյալն է. արդյոք տարվող քննությունը մինչեւ վերջ կգնա՞, ու մեղավորները կպատժվե՞ն, թե՞ էլի ձեւական գործընթաց կլինի՝ հաշվեհարդարի միտումով: «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողական կլինի իշխող կուսակցության ներսում թույլ տրված ապօրինության առիթով իրականացվելիք քննությանը:

Դատահիրավական բարեփոխումների անվան տակ այդ համակարգի անկախությունը վերջնականապես սպանած Նիկոլ Փաշինյանի իշխանությունը որոշել է հետողորմյա անել ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի ներդրած նորարարությունը, երբ կալանքի գործերը քննում էին առանձին դատավորներ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգը եւ իրավապահ համակարգը քննարկել են մինչդատական վարույթով դատարանի գործունեությունը եւ եկել այն համոզման, որ անհրաժեշտ է փակել վերջերս ձեւավորված դատարանը եւ տուն ուղարկել Աջափնյակի նստավայրում հավաքված «կալանք տվող» դատավորներին: Գուցե հետանցում լինի նախկին մոդելին, երբ դատարանները հերթապահություն էին իրականացնում, եւ օրվա հերթապահ դատավորն էր քննում օրվա ընթացքում ներկայացված կալանքի միջնորդությունները: ՀՀ երրորդ իշխանության հետ այս քննարկման պատճառը եղել է այն, որ իրավապահ համակարգը խայտառակ բացահայտում է արել Աջափնյակի դատարանի՝ «կալանք տվող» դատավորների գործունեության մասով՝ պարզելով, թե ինչ մեխանիզմներ են գործել, եւ ինչպես է որոշվել՝ ում կալանքը որ դատավորը քննի: Նկատենք, որ 1,5 տարի առաջ «կալանք տվող» դատավորների՝ տխրահռչակ Աջափնյակ-1 դատարանում աշխատելու համար ընտրվեցին մարդիկ, որոնք խնդիր չունեին ցանկացածին կալանք ապահովելու հարցում: «Կալանք տվող» դատավորները հաջողությամբ կատարում էին իրենց խնդիրը, եւ քաղաքական հնչեղություն ունեցող գործերը հիմնականում բաժին էին հասնում առավել պատրաստակամներին: Այս դատարանի ստեղծման համար ջանք ու եռանդ չխնայեց ԲԴԽ նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Ջհանգիրյանը, որպեսզի իշխանությունների սրտով որոշումներ ստանա, ու դրա համար Ազգային ժողովով փոփոխություն կատարվեց «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում. պատճառաբանությունն այն էր, որ կթոթափվի Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների ծանրաբեռնվածությունը: Իրական պատճառը, սակայն, Ջհանգիրյանի ընտրած դատավորներով ցանկալի արդյունք ապահովելն էր: Օրինակ՝ Դավիթ Արղամանյանը, որը քաղաքական իշխանությունների հանրահավաքների ակտիվ մասնակից էր եւ թմբուկ էր խփում, ներկայումս կալանավորված Արուսյակ Ալեքսանյանին մեկուսացրեց: Ահա այս սկզբունքով էլ ընտրվեցին դատավորները, որոնցից որոշները «տուն կգնան» շուտով: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի աղբյուրների հաղորդմամբ՝ միայն հայտնի է, որ այս շաբաթ մեկնարկող նստաշրջանի օրերին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ԱԺ չի մտնի՝ ընդդիմության 3 պատգամավորներին մանդատից զրկելու հարցով:

«Ժողովուրդ» օրաթերթը նոյեմբերի 4-ի համարում գրել էր, որ Վահագն Հովակիմյանի երկու որդիները հայկական բանակում չեն ծառայել. այս մասին պաշտոնապես հայտնել էին ՀՀ պաշտպանության նախարարությունից: Այս հրապարակումից հետո «Ժողովուրդ» օրաթերթը մի նոր հարցում էր ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով հայտնել, թե Միսակ Վահագնի Հովակիմյանը եւ Նարեկ Վահագնի Հովակիմյանը երբ են ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացել ենք պատասխան, ըստ որի՝ Միսակ Հովակիմյանն ազատվել է 2021 թվականի ամառային զորակոչի ընթացքում, իսկ Նարեկ Հովակիմյանը՝ 2019 թվականի ամառային զորակոչի ընթացքում, այսինքն՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահ Վահագն Հովակիմյանի երկու որդիները պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո՝ այն ժամանակահատվածում, երբ Վահագն Հովակիմյանը իշխանական պատգամավոր էր: Ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը կասեր՝ պետական պաշտոնյաները ազատում են իրենց որդիներին բանակից, իսկ խեղճուկրակ ընտանիքների երեխաները գնում են բանակ՝ որպես մսաղաց նյութ: Հիմա Նիկոլ Փաշինյանը մոռացել է նախկին խոսքերն ու խոստումները եւ աչք է փակում իր կողքի մարդկանց արարքների վրա, որոնց գործողությունները օր օրի ավելի լկտի եւ մերժելի են դառնում:

ԲԱԼԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Տարածաշրջանում մի քանի երկրներ փորձում են իրենց շահերն առաջ տանել ու իրենց ազդեցությունն ունենալ: Հայաստանն այդ ամենի էպիկենտրոնում է, ու այստեղ են հատվում թե՛ Ռուսաստանի, թե՛ Թուրքիայի, թե՛ Իրանի շահերը, ինչը, միանշանակ, բարդ իրավիճակ է ստեղծում Հայաստանի համար»: Տեսակետն Ազգային ժողովի նախկին պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ Գեւորգ Գորգիսյանինն է: Ըստ նրա՝ աշխարհաքաղաքական այս իրավիճակում Հայաստանն ինչ-որ կերպ դեռ կարողանում է բալանսավորված արտաքին քաղաքականություն վարել:

-Վերջին շրջանում Ռուսաստանի ազդեցությունը այս տարածաշրջանում նվազեց, իսկ քաղաքականության, առավելեւս՝ գլոբալ քաղաքականության մեջ վակուում չի լինում: Այն, ինչ նահանջել է, դրա տեղը պետք է լրացնել, եւ էստեղ մի քանի թեկնածուներ կան զբաղեցնելու: Մի կողմից Թուրքիան է՝ ցանկանում է իր ազդեցությունը մեծացնել, Թուրքիային հակակշիռ՝ Իրանն է ուզում մեծացնել իր ազդեցությունը, Իրանին հակակշիռ՝ արեւմուտքը, Իսրայելը, փորձում են իրենց ազդեցությունն ապահովել: Այստեղ բախվում են գրեթե բոլոր բեւեռների շահերը, եւ դա բարդ իրավիճակ է ստեղծում, սակայն Հայաստանը, ինչ-որ կերպ, դեռ կարողանում է բալանսի մեջ մնալ: Շատ բարդ իրավիճակում ենք եւ պետք է շատ աշխատել, սակայն ոչ բոլորն են դա հասկանում: Սովորաբար, բարձր գոռացողները ամենաքիչն են հասկանում: Այսօր ինչ-որ բան ազատագրել են պահանջում, վաղը՝ Կարս մտնել են պահանջելու… Ամենակարեւորը՝ մեզ անհրաժեշտ է ադեկվատություն եւ զգուշավորություն:

-Պարոն Գորգիսյան, «Կարս մտնել եւ ազատագրել են ուզում» ասելով՝ Դուք ի՞նչ նկատի ունեք:

-Ցավոք սրտի, քաղաքական դաշտն այսօր շատ անադեկվատ է: Եկեք այսօր ոչ ոքի չանդրադառնամ, եթե ուշադիր լինեք, դուք ինքներդ կնկատեք:

-Պարոն Գորգիսյան, Դուք ասում եք, որ Հայաստանը այս ամենի կիզակետում է, իսկ մեր իշխանությունների բռնած քաղաքական դիրքորոշումը, քաղաքական վեկտորը ճի՞շտ եք համարում, արդյո՞ք ճիշտ ուղղությամբ են գնում. ո՛չ Ռուսաստանից են պոկվում, ո՛չ էլ արեւմուտքին են ցանկանում նեղացնել:

-Բալանսավորված քաղաքականությունն ամենաճիշտն է այս ամենում, որն էլ մենք անում ենք հիմա: Արտաքին քաղաքականությունում մենք աջակցում ենք մեր կառավարությանը, քանի որ դրան այլընտրանք չկա: Ինչքան էլ որ կարծում ենք, որ Ռուսաստանը այսօր վատ դաշնակից է, արդյո՞ք կա այլ դաշնակից, որը պատրաստ է Ռուսաստանի չափ լինել մեր կողքին եւ մեզ աջակից. կարծես թե մենք չունենք նման աջակից: Աջակիցները շատ են, բայց շուշափելի ոչինչ չկա, կան միայն խոսակցությունների մակարդակում: Այստեղ եւս գալիս ենք մեր քաղաքական դաշտի ադեկվատությանը, ամեն մեկը փորձում է տեսնել ցանկալին, բայց ոչ՝ իրականը: Քաղաքական ոլորտում կան տարբեր կողմերի ընկալումներ. բարձրաստիճան պաշտոնյա է գալիս արտերկրից, ասում են՝ վերջ, ուրեմն մենք փրկված ենք, զորքերը կբերեն սահմանին կշարեն, եւ ոչ ոք մեզ բան չի ասի: Մյուս կողմը՝ զուտ ռուսամետները, ասում են՝ տեսեք՝ դուք նրանց բերեցիք, եւ Ռուսաստանը մեզանից նեղացավ եւ այստեղ այլեւս ոչինչ չի անելու: Երբ գալիս ենք իրական դաշտ, հասկանում ենք, որ բոլոր պետությունները ունեն իրական շահեր: Այդ շահերը կախված չեն նրանից, թե այդ երկրում ով է ղեկավարը, կամ ինչպիսի քաղաքական պրոցեսներ են ընթանում այդտեղ: Մեծ պետությունները ամեն տարածաշրջանում ունեն իրենց շահերը եւ առաջնորդվելու են այդ շահերով:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՉՆԱՀԱՆՋՈՂ ԳՆԱՃ

ԲԱՅԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

«Այսօր Հայաստանում աշխատող աղքատների տեսակարար կշիռը գնալով մեծանում է, այսինքն՝ մարդն աշխատում է, բայց այդուհանդերձ աղքատ է համարվում, որովհետև եկամուտների աճ չի սպասվում, դեռ ավելին՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գներն օր օրի են ավելանում», -ասում է տնտեսագետ Կարեն Խաչատրյանը:

Ըստ տնտեսագետի՝ պետությունը որքան էլ պնդի, թե երկնիշ տնտեսական աճ ունենք, տնտեսությունն էլ թռիչքաձեւ զարգանում է, միեւնույնն է՝ մարդիկ ամեն օր իրենց կենսակերպում զգում են տնտեսական զարգացման բացասական հետեւանքները: Մարդկանց սառնարանները գնալով դատարկվում են, իրական գնողունակությունն էլ պակասում է. եւ այս պարագայում քաղաքացին ի՞նչ անի, ինչպե՞ս դիմադրի օրեցօր ահագնացող գնաճին: Հարցերին տնտեսագետն այսպես է արձագանքում. «Նման իրավիճակում հասարակության գնունակությունն ընկնելու է, հասարակությունը՝ աղքատանալու: Մենք էլ ակնհայտորեն տեսնում ենք, որ աղքատների տեսակարար կշիռը գնալով մեծանում է: Այսինքն՝ մարդը աշխատում է, բայց շարունակում է աղքատ մնալ, քանի որ երկրում եկամուտների ինդեքսավորում տեղի չի ունենում, եկամուտների աճ չի գրանցվում: Փոխարենը՝ խանութում հատկապես առաջին անհրաժեշտության իրերի գները բարձրանում են: Նման իրավիճակում, բնականաբար, երկրում առկա սոցիալական խնդիրներն էլ ավելի են սրվելու»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տնտեսագետն ասում է, որ որքան էլ, որ պետությունը պնդում է երկնիշ տնտեսական աճ ունենալու եւ տնտեսության թռիչքաձեւ զարգացման մասին, միեւնույնն է՝ մարդիկ իրենց կենցաղավարման մեջ ամեն օր զգում են տնտեսական «զարգացման» բացասական հետեւանքները: Ըստ նրա՝ իրականում դիսոնանս կա հայտարարվող թվերի ու տնտեսության մեջ տեղի ունեցող գործընթացների միջեւ: «Այս ամենը եւս մեկ անգամ ապացուցում է, որ այն տնտեսական զարգացումը եւ տնտեսական աճը, ինչի մասին անընդհատ խոսում են պատկան մարմինները, իրականում ոչ մի կապ չունեն տնտեսության զարգացման գործընթացների հետ: Դրանք պայմանավորված են դրսից Հայաստան եկող մարդկանցով ու նրանց կողմից կապիտալի ծավալի ավելացման հանգամանքով»,- շեշտում է մեր զրուցակիցը:

ԿԵՂԾԻՔԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության ընտրությունները դեռ շարունակում են կրքեր բորբոքել: ArmLur.am-ը տեղեկացավ, թե ինչպես է բացահայտվել ներկուսակցական ընտրությունների թնջուկը: ՔՊ-ականները սկսել են միմյանց համակարգիչների մեջ մտնել:

Պարզվում է՝ ԱԺ համանուն խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը, որ ի սկզբանե վարչության անդամությունում չէր հայտնվել, կուսակցության անդամներից մեկի՝ Տրդատ Սարգսյանի համակարգչի վրա նկատել է այն շրջանառվող ցուցակը, որտեղ գրված է եղել՝ ով պետք է անցնի վարչություն, ով՝ ոչ: Նա, ըստ մեր տեղեկությունների, լուսանկարել է շրջանառվող այդ ցուցակը, ինչ-որ գրագրություններ ու վերահաշվարկ պահանջել:

«Թորոսյանն այժմ հնարավոր բոլոր օղակներով բողոքում է ընտրությունների արդյունքներից: Ընդհուպ՝ կուսակցական գործընկերոջ համակարգիչ է մտել, ով պատահաբար բաց էր թողել մի էջ, որտեղից Արսեն Թորոսյանը տվյալներ է հանել, որ կուսակցական ընտրությունները կասկածի տակ դնի:

Ավելին՝ ՀԿ սեկտորին է այս հարցին խառնել, որ կուսակցականների դեմ խոսեն: Այս պահին կուսակցությունում բոլորը լարված են Թորոսյանի դեմ: Մենք շատ լավ հիշում ենք՝ ամենաանհաջողակ նախարարն էր ու հիմա սրբի շորերը հագած՝ ընտրություններից, արդարությունից է խոսում»,- ասաց ՔՊ-ամերձ մեր աղբյուրը:

Մեզ փոխանցեցին նաեւ, որ կուսակցական վարչության այդ խայտառակ ընտրությունները, որ ներկուսակցական մոլի գզվռտոցների պատճառ են դարձել, դեռ երկար է մնալու ՔՊ-ականների կոկորդին: Բոլորն արդարանում են եւ բղավում՝ «բռնեք գողին»: Իսկ բռնող դեռ չկա:

ՆԵՐԿԱ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

Խորհրդարանական ընդդիմությունն այսօր Ազգային ժողովում կմասնակցի աշխատանքներին: Թեեւ ընդդիմադիր «Պատիվ ունեմ» ու «Հայաստան» խմբակցությունները միասնաբար չեն հայտարարել՝ այսօր մեկնարկող քառօրյա նիստերի աշխատանքներին մասնակցելու են արդյոք, թե ոչ, բայց «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ ընդդիմադիր պատգամավորները խորհրդարանի հայտարարությունների ժամին ներկա են լինելու:

Պահն օրհասական է, ասում են ընդդիմադիր պատգամավորները, Արցախի ու Հայաստանի շուրջն օղակը գնալով սեղմվում է, ու Նիկոլ Փաշինյանի դեմ պայքարը թե՛ փողոցում, թե՛ խորհրդարանում, թե՛ հնարավոր մյուս բոլոր հարթակներում պետք է շարունակել: Վստահեցնում են, որ այնպես չէ՝ ԱԺ շենք են մտնելու ու մոռանան փողոցի պայքարի մասին, պարզապես բոլոր հարթակները պետք է օգտագործել:

«Կառավարություն-Ազգային ժողով հարցուպատասխանին մասնակցելո՞ւ եք»,- հետաքրքրվեցինք ընդդիմադիրներից: Ի պատասխան մեր հարցին՝ թե՛ «Պատիվ ունեմ»-ից, թե՛ «Հայաստան» դաշինքից պատասխանեցին՝ դեռ հստակ որոշում չունեն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՌԱՋԱՐԿ՝ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Պաշտպանության նախարարությունը ժամկետային զինծառայողների համար շուտով նոր օրինագիծ կմշակի ու, ըստ այդմ, 18-ամյա տղաների համար նոր առաջարկությամբ հանդես կգա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ խոսքը ժամկետային զինվորական ծառայությունից՝ պայմանագրային հիմունքներով ծառայության անցնելու մասին է: Օրինագծի մասին օրերս նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է խոսել՝ Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ: Վարչապետ Փաշինյանը մասնավորապես ասել է հետեւյալը. «Առաջիկայում կընդունենք «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, որը ժամկետային զինծառայողներին հնարավորություն կտա վեց ամիս հետո անցնել պայմանագրային ծառայության՝ բարձրացված աշխատավարձերով»:

Ըստ օրինագծի՝ ժամկետային զինծառայողը բանակում 6 ամիս ծառայելուց հետո կարող է պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքել ու ծառայության մնացած հատվածն արդեն որպես պայմանագրային զինվորական անցկացնել, այսինքն՝ եւ՛ ծառայել, եւ՛ աշխատել զինված ուժերում, ու, ի դեպ, բարձր աշխատավարձ ստանալ: Բացի այդ. պայամանագրի ժամկետը լրանալուց հետո զինվորականը միանվագ 5 մլն դրամ է ստանալու պետությունից: Ծրագիրը, որ «Պաշտպան հայրենյաց» անունն ունի, այսօր՝ նոյեմբերի 14-ին, Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցեի մշտական հանձնաժողովում, հետո՝ հաջորդ իսկ օրը մեկնարկող ԱԺ քառօրյա նսիտերի օրը կքննարկվի: Հարցի զեկուցողը պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն է:

ԱՀԱՋԱՆԳԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Armlur.am խմբագրությունն ահազանգ է ստացել՝ օրերս Երվանդ Քոչարի փողոցում մի խումբ երիտասարդների կողմից զինված «ռազբորկայի» եւ հնչած կրակոցների դեպքով: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը ձերբակալել է դեպքի հետ որեւէ առնչություն չունեցող անձի, որին երեք օր պահելուց հետո ազատ են արձակել: Սակայն լուրեր կան, որ տղամարդուն ցանկանում են տանել կալանքի, որպեսզի այդ ճանապարհով նա աջակցի քննությանը եւ հայտնի դեպքի մասին այլ մանրամասներ, մինչդեռ տղամարդը պնդում է, որ այն, ինչ գիտի, հայտնել է, եւ որեւէ այլ բան չգիտի: Սակայն Նոյեմբերի 14-ի դրությամբ կան կալանավորվածներ: Հիշեցնենք, որ նոյեմբերի 7-ին ոստիկանությունը Երեւանում կանխել է մինչեւ ատամները զինված «ռազբորկան»: Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում եւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում ժամը 20:30-ին օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երվանդ Քոչար փողոցում մի խումբ երիտասարդների միջեւ զինված «ռազբորկա» է տեղի ունենում: Ոստիկանները նշված վայրում հայտնաբերել են 1 հատ մարտական թմբուկավոր ատրճանակ, իսկ Mazda 6 մակնիշի ավտոմեքենայում՝ վարորդի նստատեղին, մեկ այլ մարտական զենք, եւ ավտոմեքենայի դռան գաղտնի վայրում՝ մեկ այլ մարտական զենք:

ՍՏԵՐԻ ՇԱՐՔԻՑ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը այս տարվա մայիսից «Նիկոլ Փաշինյանը խաբել է....» անվամբ շարք է սկսել, եւ ամեն օր օրաթերթի հերթական համարում ներկայացնում է վարչապետի՝ տարբեր ժամանակներում արված հայտարարությունները եւ զուգահեռելով իրականությանը՝ ապացուցում, որ նա տարբեր առիթներով մանիպուլացնում եւ խաբում է քաղաքացիներին:

Ի լրացումն այս շարքի՝ ArmLur.am լրատվական կայքում արդեն կսկսենք մեկ այլ շարք եւ կներկայացնենք արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ պաշտոնյաների կողմից տարբեր ժամանակներում ասված կեղծ հայտարարությունները, քանի որ նման գործելաոճ, ամեն դեպքում, միայն վարչապետը չէ, որ ունի: Նման գործելաոճով աչքի են ընկել ոչ միայն կոնկրետ անձինք, այլ նաեւ գերատեսչությունները՝ պաշտոնական հաղորդագրությունների միջոցով:

2022 թվականի հունիսի 21-ին ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հարցազրույց էր տվել «Ազատություն» ռադիոկայանին: Ի թիվս այլ հարցերի, հարցազրույցի ժամանակ անդրադարձ է եղել նաեւ ՀՀ անվտանգության, Ադրբեջանում պահվող ռազմագերիների եւ Ակնայի ականապատ տարածքների քարտեզների թեմային:

«Մայիսի 27-ից առաջ երկար ժամանակ գերիների հարցը չէր լուծվում: Երբ պարոն Այվազյանը (նկատի ունի ՀՀ արտաքին գործերի նախարար Արա Այվազյանին- խմբ.) հրաժարական տվեց, շատ արագ այդ հարցը լուծվեց: Եվ պարոն Այվազյանը, լինելով պաշտոնյա, մեր գործընկերներին ասում էր, որ ականապատ դաշտերի քարտեզները, որոնք մենք արդեն տվել ենք, այդ քարտեզները մենք չունենք: Եվ երբ պարոն Այվազյանը պաշտոնից հրաժարական տվեց, նաեւ հնարավորություն ստեղծվեց այս հարցը լուծելու»,- ասել է Արմեն Գրիգորյանը:

Դրանից հետո Արա Այվազյանը պատասխանեց Արմեն Գրիգորյանի հայտարարություններին՝ դրանք որակելով որպես զրպարտություն: Ապա նա ընդգծել էր, որ հրաժարականից մեկ շաբաթ առաջ, այն ժամանակ դեռ կառավարության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն արդյունավետ եւ դրական էր գնահատել արտաքին գործերի նախարարության աշխատանքը:

Մեկ այլ անգամ Արմեն Գրիգորյանը մանիպուլատիվ հայտարարություն էր արել «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ՝ 2021 թվականի ապրիլի 3-ին: «Տեխնոլոգիաների եւ ռազմավարությունների վերլուծության կենտրոնը («ՑԱՍՏ») հրապարակել է ուսումնասիրություն, որում գնահատվել է Ռուսաստանի դաշնակիցների գործունեությունը: Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների մասով Հայաստանը ամենասկզբունքային եւ հուսալի պետություններից մեկն է», - ասել էր նա:

Սակայն Արմեն Գրիգորյանը մանիպուլացրել է «ՑԱՍՏ»-ի գնահատականը: Իրականում Հայաստանը բնութագրված է որպես «Միջին կարեւորության եւ մեծ հավատարմություն» ունեցող երկիր, եւ, հավելում են . «Հարաբերությունների եւ դաշինքի հետագա շարունակական զարգացումը մեծ հաշվով այսուհետ կախված է Հայաստանի նոր ղեկավարության քայլերից եւ որդեգրած քաղաքականությունից»: Այսինքն՝նրա խոսքերում մանիպուլյացիա է առկա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ԼՂ ՀԱՐՑԸ ԼՈՒԾՎԱԾ Է»

«Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հայերին կոչում է «մեր քաղաքացիներ» ու միաժամանակ կրակում է նրանց վրա, երբ նրանք գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացնում». իր սոցիալական ցանցում գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«2020-ի նոյեմբերի 9-ից հետո սպանության փորձի 54 դեպք է գրանցվել, ինչի հետեւանքով սպանվել է 3 քաղաքացիական անձ, վիրավորվել 16-ը: Արդյո՞ք սա իրականացումն է ադրբեջանական կողմի այն նարատիվի, ըստ որի «ԼՂ հարցը լուծված է»», - նշել է Փաշինյանը:

ԵԱՀԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 14-ին Անվտանգության խորհրդի գրասենյակում ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է ԵԱՀԿ ԽՎ երիտասարդ պատվիրակների խմբի անդամներին:

Խմբի անդամների խնդրանքով ԱԽ քարտուղարը ներկայացրել է Հայաստանի շուրջ ստեղծված տարածաշրջանային անվտանգային իրավիճակը, հայ-ադրբեջանական բանակցային գործընթացից որոշ մանրամասներ եւ ընդգծել ՀՀ մոտեցումներն ու տեսակետները:

Կողմերը կարեւորել են ինչպես ԵԱՀԿ կարիքների գնահատման առաքելության, այնպես էլ՝ ԵՄ քաղաքացիական առաքելության տեղակայումը Հայաստանում եւ անդրադարձել դրանց գործունեությանը: Այս համատեքստում ԱԽ քարտուղարն ընդգծել է համագործակցության նման ձեւաչափերի ներուժը՝ նպաստելու տարածաշրջանում անվտանգային միջավայրի ամրապնդմանը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արցախի Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նոյեմբերի 14-ին նիստում քննարկվել է Արցախի Հանրապետության նախագահի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Այս մասին հայտնում են Արցախի ԱԺ մամուլի ծառայությունից:

Տեղեկատվության համաձայն՝ նախագծերի ընդունումը պայմանավորված է Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքների՝ Արցախի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի փաստացի իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Փաթեթով առաջարկվում է ընտրողների ցուցակները կազմել ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների, իսկ Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում գտնվող բռնազավթված տարածքների Արցախի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձանց ընտրողների ցուցակները՝ ըստ գտնվելու վայրի հասցեների՝ այդ կերպ նպաստավոր պայմաններ ստեղծելով քվեարկության կազմակերպման համար:

Փոփոխությունները ներկայացրել է Արցախի արդարադատության նախարար Ժիրայր Սիրզոյանը. նա պատասխանել է պատգամավորների հարցերին: ԱՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սեւակ Աղաջանյանը տեղեկացրել է, որ նախագծերի փաթեթը փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական ծառայությունում, եւ առաջարկված խմբագրական բնույթի փոփոխությունները հեղինակի կողմից ընդունվել են:

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ ««Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ կներկայացվի խորհրդարանի արտահերթ նիստի քննարկմանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՎ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ինչպես հայտնի է, Բարձրագույն դատական խորհուրդը 2021 թվականի հոկտեմբերի 4-ին որոշում կայացրեց Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Գագիկ Խանդանյանի լիազորությունները դադարեցնելու մասին:

Արդյունքում՝ դատավոր Խանդանյանը դիմել է ՍԴ՝ վիճարկելով իր նկատմամբ կիրառված նորմերի Սահմանադրության համապատասխանության հարցը: Ահա այստեղ էլ թաղված է շան գլուխը:

Եվ այսպես, հայկական իրականությունում դատական համակարգը վերահսկելու լավագույն միջոցն անթաքույց դարձել է ԲԴԽ-ն, քանի որ վերջինս է իրավասու դադարեցնել դատավորի լիազորությունները՝ հասկանալով, որ իր որոշումները չեն կարող վերանայվել եւ վերջնական են: Արդյունքում՝ ձեռք բերելով անսահմանափակ իշխանություն, ԲԴԽ-ն կայացնում է ցանկացած որոշում կամայական մեկնաբանություններով՝ նախապես վստահեցված լինելով, որ Սահմանադրական դատարանն իր հերթին խոչընդոտ չի հանդիսանա այդ գործում:

Նմանատիպ գործերը քննվել են հիմնականում Գագիկ Ջհանգիրյանի նախագահության օրոք, սակայն, անգամ վերջինիս հեռացումից հետո, կարծես թե բոլորը, այդ թվում՝ նաեւ Սահմանադրական դատարանում, առաջնորդվում են այն նույն գործելաոճով, որը թելադրված է եղել Ջհանգիրյանի կողմից:

Նշված դեպքերից բացառություն չէ դատավոր Գագիկ Խանդանյանի լիազորությունների դադարեցման գործը, որի շրջանակներում ԲԴԽ-ն դատավորի լիազորությունների դադարեցման որոշումը կայացրել էր Ջհանգիրյանի նախագահությամբ: Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքում ներկայացվող տեղեկատվության համաձայն՝ Գագիկ Խանդանյանի կողմից ներկայացվել է դիմում Սահմանադրական դատարան 2021 թվականի դեկտեմբեր ամսին, որն ընդունվել էր վարույթ:

Վարույթ ընդունելուց հետո գործի քննությունը մի քանի անգամ երկարաձգվել է, այնուհետեւ կասեցվել է լրացուցիչ ապացույց պահանջելու հիմքով եւ շարունակում է կասեցված մնալ մինչ օրս:

Առաջին հայացքից որեւէ հատկանշական իրադարձություն այս գործում կարող է չթվալ, սակայն առավել մանրամասն դիտարկումից հետո պարզ է դառնում հետեւյալը.

-Ի սկզբանե զեկուցող դատավոր է նշանակվել Ե. Խունդկարյանը, ով 2008 թվականից մինչեւ 2018 թվականը եղել է Վճռաբեկ դատարանի դատավոր: Վերջինս գործի քննության ընթացքում փոխարինվել է դատավոր Վահե Գրիգորյանով, ով նշանակվել է ՍԴ դատավոր 2019 թվականից՝ նախկինում չունենալով դատավորի փորձ:

-Վահե Գրիգորյանի՝ զեկուցվող նշանակվելուց հետո անմիջապես նույն օրը՝ 2022 թվականի մայիսի 31-ին, գործի վարույթը կասեցվում է՝ ապացույց պահանջելու հիմքով, սակայն կասեցման որոշումից հնարավոր չէ պարզել՝ ինչ ապացույց եւ ինչ փաստ հաստատելու համար է այն պահանջվել:

-Սահմանադրական դատարանում քննության ժամկետ սահմանված է 6 ամիս, իսկ երկարաձգում կարող է թույլատրվել, եթե վարույթը կասեցվում է: Այս պահին անցել է շուրջ մեկ տարի, եւ դեռեւս վարույթը կասեցված է:

-Սահմանադրական դատարանը, ըստ էության, գործը քննում է ոչ թե փաստեր ուսումնասիրելու միջոցով, այլ հարցի սահմանադրականությունը պարզելու տեսանկյունից: Հետեւաբար, անգամ եթե լրացուցիչ ապացույցների կարիք է առաջանում, ապա դրանք արդեն իսկ առկա են համապատասխան պետական մարմիններում եւ ձեռքբերումը որեւէ դժվարություն կամ լրացուցիչ ժամանակ չի պահանջում: Այս պարագայում, կասեցումից հետո անցել է արդեն իսկ 6 ամիս, սակայն հնարավոր չէ պարզել, թե ինչո՞ւ ապացույցները դեռեւս չեն ներկայացվել Սահմանադրական դատարան եւ ի՞նչ է ձեռնարկել Սահմանադրական դատարանը՝ ապացույցները չստանալու պատճառները պարզելու ուղղությամբ:

-Գագիկ Խանդանյանի՝ դատավորի պաշտոն զբաղեցնելու տարիքը լրանում է 2023 թվականին: Այսինքն՝ անգամ եթե սահմանադրական դատարանը բավարարի դիմումը, դրան պետք է դեռեւս հաջորդի ԲԴԽ-ում գործի նոր քննությունը: Այսինքն, որքան գործը կասեցված է մնում, այնքան դիմումատուի իրավունքների վերականգնումը դառնում է քիչ հավանական՝ անկախ գործի ելքից:

-Սահմանադրական դատարանի կազմի փոփոխության հավանականությունը շարունակում է պահպանվել, որը պայմանավորված է ինչպես նոր դատավորների նշանակման, այնպես էլ արդեն իսկ գործող դատավորների (որոնք պաշտոնավարում են դեռեւս վաղ անցյալից) փոփոխության հնարավորության հետ: Կասեցումը թույլ կտա վերջնական որոշման կայացումն իրականացնել այն կազմով, որի անդամները սոլիդար կլինեն մեկը մյուսի նկատմամբ:

Ամբողջ վերոգրյալի վերլուծությունը ցույց է տալիս ոչ այնքան Սահմանադրական դատարանում գործի քննության ժամանակ տեղի ունեցող բացթողումները, որքան կապը Սահմանադրական դատարանում տեղի ունեցող գործընթացների եւ ԲԴԽ-ում ավարտված գործի քննության հետ:

Եթե քննարկվող գործով նախաձեռնող սուբյեկտը ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանն էր, ապա իրադարձությունների նման զարգացումը ցույց է տալիս, որ վերջինս շարունակում է ստվերային եղանակով պահպանել իր ազդեցությունը արդեն իսկ սկսված, սակայն չավարտված գործերում, անգամ եթե հարցի քննությունը տեղափոխվել է Սահմանադրական դատարան:

Կարծես թե ստեղծվում է աշխատանքից ազատվելու դեպքի դասական պատկեր, երբ չես կարող լքել աշխատանքդ, քանի դեռ չես ավարտել կիսատ գործերը: Իրավիճակի նման պատկերը կարող է տարօրինակ չթվալ, քանի որ լրիվ տրամաբանական է, որ եթե Ջհանգիրյանը բոլոր հնարավոր եղանակներով ապահովել է Բարձրագույն խորհրդի անդամների միաձայն որոշումը, ապա նույն ջանքերը գործադրելու է նաեւ անմիջապես Սահմանադրական դատարանի բոլոր անդամների նկատմամբ, քանի դեռ չի հասել իր բաղձալի արդյունքին: Ամեն ինչ պարզ է ԲԴԽ-ի դեպքում, սակայն ոչ Սահմանադրական դատարանի անդամների մասով, քանի որ վերջիններս դեռեւս դիմադրում են եւ չեն կողմնորոշվում իրենց ընտրության հարցում. մի կողմից՝ գործի քննությունը չեն ավարտել, մյուս կողմից՝ չեն էլ շտապում վերսկսել վարույթը:

Այլ տարբերակի դժվար է հավատալ, թե Սահմանադրական դատարանը այնքան կոմպետենտ չէ, որ մեկ տարվա ընթացքում չի կարողանում իրականացնել գործի քննությունը, կամ գոյություն ունի որեւէ պետական մարմին, որ ամիսների ընթացքում չի տրամադրում պահանջվող ապացույցները՝ դրանով իսկ խոչընդոտելով սահմանադրական արդարադատությանը, որի համար, ի դեպ, օրենքով սահմանված է պատասխանատվություն:

Սահմանադրական դատարանի անվանումն ինքնին արդեն իսկ կանխորոշում է վերջինիս դերը ոչ միայն դատական, այլ նաեւ հենց ամբողջ պետական համակարգում եւ հասարակությունում, քանի որ Սահմանադրական դատարանի հիմնական խնդիրը Սահմանադրության՝ երկրի հիմնական օրենքի պահպանումն է:

Որպես կանոն դատարանի անաչառության եւ որոշումների իրավաչափության գնահատումը տեղի է ունենում գործի քննության ավարտից հետո, երբ արդեն իսկ պարզ է դառնում գործի ելքը, եւ բացահայտվում են դատարանի պատճառաբանությունները: Այս դեպքում, սակայն, կարծես թե հենց գործի քննության ընթացքում է, որ պարզ է եւ կանխատեսելի է դառնում Սահմանադրական դատարանի կանխակալ գործելաոճը, հակառակ պարագայում՝ գործի քննությունը կզարգանար բնականոն հունով, քանի որ որեւէ խոչընդոտ առկա չէ:

Քննարկվող հարցի նշանակությունը դուրս է գալիս մեկ գործի սահմաններից եւ առնչվում է ամբողջ պետական համակարգին, քանի որ եթե այս գործով է Սահմանադրական դատարանը դրսեւորում առնվազն անհասկանալի եւ վստահություն չներշնչող վարքագիծ, ապա հարց է առաջանում՝ մյուս դեպքերում հասարակության անդամներն ինչպես կարող են վստահել, որ իրենց վերաբերող կամ այլ հայտնի ու հնչեղ գործերով գործի քննությունը չի իրականացվի նմանատիպ եղանակով: Արդյունքում առաջանում է զանգվածային անվստահություն դատական համակարգի ամենաբարձր օղակի նկատմամբ, այն պայմաններում, երբ պետական համակարգի ամենաբարձր պաշտոններ զբաղեցնող անձինք արդեն բավականին երկար ժամանակ պնդում են, որ իրենց պայքարը այնպիսի համակարգի ստեղծումն է, որը կապահովի արդարադատության պատշաճ իրականացումը:

Հաշվի առնելով հարցի կարեւորությունը՝ խմբագրականը շարունակելու է հետեւել գործի ընթացքին եւ կտեղեկացնի հասարակությանը սույն գործով իրադարձությունների զարգացման մասին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԾԽԱՀԱՐՎԱԾ ԴԻԱԿ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նոյեմբերի 12-ին ուշագրավ դեպք է եղել Շիրակի մարզի Ախուրիկ գյուղում: Գյուղի տներից մեկում հայտնաբերվել է Վահրամ. Մ-ի ծխահարված դիակը՝ անկողնում պառկած վիճակում: Նախնական տեղեկություններով՝ տղամարդը ծխահարվել է՝ ծխախոտը անկողնուն ընկնելու հետեւանքով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ Նոր Նորքի 7-րդ զանգվածի շենքերից մեկի բակում կրակոցներ հնչեցնելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հիշյալ վայրում անհայտ անձի կողմից կրակոցներ հնչեցնելու եւ հայհոյելու մասին ահազանգը ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 16:14-ին:

Ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, ով նույն թաղամասի 44-ամյա բնակիչ է:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ՝ հայտնաբերվել է 31 հատ պարկուճ եւ 2 հատ փամփուշտ: 44-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 24 հատ S & B 7,62*25 գրառմամբ փամփուշտ: Վերջինիս կինը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել «COLT տեսակի», «Մակարով» տեսակի ատրճանակին նմանվող, ինչպես նաեւ «INFORCE» գրառմամբ ատրճանակներ, «ВЕПРЬ-КМ» տեսակի ինքնաձիգ, 66 հատ 9մմ տրամաչափի փամփուշտ, 1 պարկուճ, 2 հատ փամփշտատուփ, որոնք առգրավվել են: Հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել համապատասխան փորձաքննություններ:

44-ամյա տղամարդը ձերբակալվել է՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով: Նախաքննությունը շարունակվում է:

ՄԵՔԵՆԱՆ ՓԱԽՑՐԵԼ ԵՆ

Նոյեմբերի 13-ին՝ ժամը 13-ին, 1-02 ծառայություն է զանգել մի քաղաքացի եւ հայտնել, որ Կոտայքի մարզի Ջովունի գյուղում կայանված իր մեքենան փախցրել են: Մեքենայատերը հայտնել է, որ Ջովունու 5-րդ փողոցում կայանված իր «Ֆոլքսվագենը» փախցրել են գիշերը: Նաիրիի ոստիկանները կողմնորոշիչներ ուղարկեցին հարակից մարզերի գործընկերներին, մայրաքաղաքի եւ մարզային պարեկային ծառայություններ՝ հայտնելով մեքենայի եւ հնարավոր առեւանգողի տվյալները: Միջոցառումներն արդյունք տվին նույն օրը, նաեւ հաստատվեց քրեական հետախույզների տեղեկությունը ավտոառեւանգողի վերաբերյալ: Շիրակի մարզի պարեկների տեսադաշտում է հայտնվում առեւանգված մեքենան Գյումրի-Արմավիր ճանապարհին՝ Գետք գյուղի վարչական տարածքում. նա ձերբակալվում է եւ առեւանգված «Ֆոլքսվագենով» հանդերձ՝ տեղափոխվում ոստիկանության Ախուրյանի բաժին: Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղի բնակիչ 35-ամյա տղամարդը հայտնում է, որ մեքենան ինքն է առեւանգել Ջովունի գյուղի 5-րդ փողոցից: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է բացովի դանակ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 11-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 105 դեպք, որից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԽԱՆՈՒԹԸ ՓԱԿ ԵՆ ՊԱՀՈՒՄ

2010թ. մայիսի 22-ին Իջեւանում Ֆրանսիայի Օ- դը Սեն նահանգի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյանը եւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը ստորագրել են համատեղ նկատառումների հուշագիր: 2011թ. Ֆրանսիայում երկու կողմերը ստորագրել են ապակենտրոնացված համագործակցության շրջանակային պայմանագիր՝ 3 տարի ժամկետով. հետագայում նման նոր պայմանագրեր են ստորագրվել: Ֆրանսիական կողմի աջակցությունը նպատակաուղղված է եղել Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, սահմանագոտու բնակիչների կենսամակարդակի բարելավմանը: Հայ-ֆրանսիական համագործակցությամբ ստեղծված «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը եւս բարեգործական ծրագրեր է իրականացնում, սակայն տարիների ընթացքում, հիմնադրամի գործունեության հետ կապված, բազում խնդիրներ են առաջացել: 2013 թվականին Իջեւանի տարածաշրջանի Դիտավան համայնքի նախկին ղեկավար Սեյրան Սարգսյանը եւ 3 այլ դիտավանցիներ դատի են տվել «ՀիմնաՏավուշ» հիմնադրամին, այդ դատը տարիներ տեւեց: Իջեւանի տարածաշրջանի Լուսաձոր գյուղի կողքով՝ միջպետական ավտոճանապարհով երթեւեկողները տարիներ շարունակ ցայսօր զգում են ծանր, տհաճ հոտ, որը Լուսաձորի անասնապահական ֆերմայի եւ պանրագործարանի գործունեության տհաճ հետեւանքն է: 2016թ. ամռանը Լուսաձորի պանրագործարանին հարակից տարածքում հորելով՝ որպես անորակ արտադրանք ոչնչացրել են Լուսաձորի պանրագործարանում արտադրված 3.5 տոննա պանիրը: Սուրեն Գեւորգյանը Ֆրանսիայի հայկական հիմնադրամի տնօրենն է, եւ միաժամանակ «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի ղեկավարն է, նրա կինը՝Հասմիկը, 2016թ. հուլիսի 1-ից Լուսաձորի պանրագործարանում արտադրվող պանիրը Ռուսաստանում իրացնող «էկոՏավուշի» տնօրենն է: Ամուսիների կողմից ղեկավարվող «ՀիմնաՏավուշի» եւ «էկոՏավուշի» բիզնես հարաբերություններում կոռուպցիոն ռիսկեր կան : Իջեւանում, քաղաքային շուկայի մոտ գտնվող ֆիրմային խանութում վաճառվում է Լուսաձորի պանրագործարանում արտադրվող պանիրը: Իջեւանի բնակիչներն ասում են, որ խանութը սովորաբար փակ են պահում, որպեսզի պանիրն առաքեն Ռուսաստան, շահույթ ստանան: Մի քանի օր առաջ՝ցերեկվա աշխույժ ժամին, «Ժողովուրդ» օրաթերթը այցելեց խանութ, սակայն այցելության ժամանակ էլ խանութը փակ էր, թեեւ ֆիրմային խանութի ապակե մուտքին գրված էր՝ «Բաց է»: Ապակե թափանցիկ մուտքից ներս նայելով՝ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը տեսել է ապակեպատ սառնարանում դրված պանրի սահմանափակ թվով տեսակների, այլ կաթնամթերք խանութում առկա չի եղել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԵՄԶԱՇԵՆԻ ԴԵՊՔԸ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

ArmLur.am-ին հայտնի է դարձել՝ Պեմզաշենում մորը եւ երկու երեխաներին դաժան կերպով սպանության գործով ձերբակալվածները ինչ են պատմել իրավապահներին: Այսպիսով, ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ այս պահին բեական գործով դեպքի մասին իրավապահներին ողջ եղելությունը պատմել է ձերբակալվածներից միայն Պեմզաշենի բակիչ Վրույր Բարսեղյանը: Նա նախաքննական մարմնում պատմել է, որ տուն է մտել գիշերը, տան հիմնական դռնից եւ տան դուռը բաց է եղել: Զարինե Մելիքսեթյանի տուն են մտել գողության նպատակով, բայց երբ խառնաափոթ իրավիճակ է եղել, տան անդամները դիմադրել են, նրանք կապել են ընտանիքի անդամներին, որից հետո էլ սեռական բռնի գործողությունների են դիմել:

Ի դեպ, ArmLur.am-ին ՔԿ մամուլի խոսնակ Վարդան Թադեւոսյանը հաստատեց տեղեկությունը, որ ոճրագործները Պեմզաշենում սպանված ընտանիքի 12-ամյա աղջնակի նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողություններ են կատարել: Ավելին՝ ըստ Վյուր Բարսեղյանի խոսքերի՝նրանք իրենց գործողությունները կատարելուց հետո տան հիմնական դռնից էլ դուրս են եկել ու հեռացել:

Ավելին՝ մեզ հայտի դարձավ, որ այս պահին քրեական վարույթով մյուս ձերբակալված անձը, որը Վրույր Բարսեղյանի հորեղբոր տղան է՝ Արկադի Բարսեղյանը, հրաժարվում է ցուցմունք տալ եւ պատմել դեպքի մանրամասները: Ուշագրավ հանգամանք եւս. Վրույր Բարսեղյանն առողջական խնդիրներ ունի եւ հաշվառված է Հայաստանի հոգեբուժարաններից մեկում: Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին արտակարգ ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի Պեմզաշեն գյուղի տներից մեկում: Տան բնակիչները չէին արձագանքել դռան թակոցներին, իրավապահների ներկայությամբ դուռը բացելուց հետո հատակին 3 դի էր հայտնաբերվել՝ տան բնակիչներ Զարինե Մելիքսեթյանը, նրա դուստր Կարինե Մելիքսեթյանը եւ նրա 8-ամյա որդին: Մի քանի օր շարունակ իրավապահները չէին կարողանում բացահայտել, թե ովքեր են ոճրագործները, որոնք դաժան կերպով սպանել էին տան անդամներին, սակայն նոյեմբերի 12-ին ենթադրյալ հանցագործություն կատարածները հայտնաբերվեցին եւ նրանցից մեկը՝ Վրույր Բարսեղյանը, խոստովանել է դեպքի մասին: Ի դեպ, համայնքում տարածվող տեղեկությունների համաձայն՝ կասկածյալներից մեկը գյուղում հետեւել է իրավապահների աշխատանքին, տեսել, թե ինչպես են դուրս բերվում սպանված կնոջ ու նրա մանկահասակ երեխաների մարմինները: Անգամ երեկ սառնասրտորեն մասնակցել է նրանց հուղարկավորություններին, ցավակցել ընտանիքի անդամներին: Դարձյալ ըստ տարբեր աղբյուրներում շրջանառվող վարկածների՝ սպանությունների հեղինակ 32-ամյա կասկածյալը, որը ձերբակալվել էր երեկ, բավականին տեղեկացված է եղել սպանվածների ընտանիքի նիստուկացին, իմացել, որ տան տղամարդը գտնվում է արտագնա աշխատանքի արտերկրում, իմացել է նաեւ, որ տան բակում շուն կա: Ու քանի որ նա ծանոթ է եղել ընտանիքին, բազմաթիվ անգամներ սպանվածների տան մոտով անցել է, շունը երբեւէ նրա վրա չի հարձակվել, չի հաչել: Հենց այդ պատճառով էլ սպանության գիշերը վերջինս առանց դիմակ՝ բաց երեսով, մտել է այդ տուն: Հավելենք նաեւ, որ ՀՀ ոստիկանությունը նոյեմբերի 11-ին դիմել էր հասարակությանը՝ ակնկալելով քաղաքացիների աջակցությունն ու համագործակցությունը Պեմզաշենում կատարված սպանությունների գործով, որից մեկ օր անց հրապարակեց տեղեկություն այն մասին, որ հանցագործությունը բացահայտված է, կա ձերբակալված:

ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԵՐ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ն ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Ս.թ. նոյեմբերի 10-ին որոշ լրատվական կայքերում հրապարակված շմոլ գազով թունավորման դեպքերի վերաբերյալ ԵՊԲՀ հասարակայնության հետ կապերի բաժնի հաղորդագրության առումով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն իր անհամաձայնությունն է հայտնում, քանի որ ՀՀ տարածքում գործող տարբեր բուժկենտրոններից, ոստիկանության բաժանմունքներից եւ ՀՀ արտակարգ իրավիճակների տարածքային ստորաբաժանումներից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վքարակարգավարական ծառայության 1-04 եւ այլ կոնտակտային հեռախոսահամարներին ընդունված կարգով հաղորդված կանչերի ու տեղեկատվության համաձայն՝ հանրապետության տարածքում ս.թ. նոյեմբերի 1-ից 11-ը արձանագրվել է շմոլ գազից թունավորման 11 դեպք: Մինչդեռ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրից որևէ տեղեկատվություն կամ կանչ ընդհանրապես չի գրանցվել:

Նման կանչեր կամ տեղեկատվություն ստանալով՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, առաջնորդվելով ՀՀ կառավարության 12.04.2007թ. N 580-Ն որոշմամբ հաստատված կարգով, կատարում է մասնագիտական քննություն եւ սահմանված կարգով կազմում արձանագրություն թունավորման դեպքերի առաջացման պատճառների եւ պայմանների վերաբերյալ, որոնք հաշվետվությամբ ներկայացվում են ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին եւՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

Հաշվի առնելով այն, որ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրից շմոլ գազից թունավորումների վերաբերյալ ընդունված կարգով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին չի տեղեկացվել, մասնագիտական քննություն չի անցկացվել ու չի պարզաբանվել դրանց առաջացման պայմաններն ու պատճառները, ԵՊԲՀ լրատվական ծառայության կողմից դրանք բնական գազի օգտագործման հետ կապելը առնվազն կոռեկտ չէ եւ դիտարկվում է որպես ապատեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն կոչ է անում զերծ մնալ չպարզաբանված հանգամանքներում նախնական ախտորոշմամբ շմոլ գազով թունավորման դեպքերը միայն բնական գազի օգտագործման հետ կապելուց եւ չհաստատված եզրահանգումներ կատարելուց:

Շմոլ գազը կամ ածխածնի մոնօքսիդը ձեւավորվում է օրգանական տարբեր նյութերի թերայրման պայմաններում, մասնավորապես ածխածին պարունակող ցանկացած նյութերի եւ առարկաների այրման ժամանակ: Այն գոյանում է ածուխի, յուղի, վառելափայտի, բնական գազի եւ գրեթե ամեն ինչի այրման ընթացքում, ինչը կարող է օգտագործվել այրման ճանապարհով էներգիայի ստացման նպատակով:

Բացի բնական գազով աշխատող գազասարքերից, ածխածնի մոնօքսիդի աղբյուր են հանդիսանում նաեւ ծխախոտը, օջախները, փայտյա վառարանները, ջեռուցիչները, զոդիչները, խոտհնձիչները, էլեկտրական գեներատորները, ասֆալտապատման մեքենաները: Առավել վտանգավոր է, երբ տվյալ սարքավորումն օգտագործվում է շինություններում կամ փակ տարածքներում: Ածխածնի մոնօքսիդ կամ շմոլ գազ առաջանում է մեքենաների շարժիչներից, որոնց անսարքությունների հետեւանքով շմոլ գազը կարող է լցվել մեքենայի խցիկ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Հասարակայնության եւ ԶԼՄ-ներիի հետ կապերի ծառայություն

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 36 ՃՏՊ. 6 մարդ զոհվել է, 48-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արագածոտնի մարզ, համայնք Կոշ, 16-րդ փողոց, 29 հասցեում գտնվող 239,5 ք.մ.բնակելի տուն, 22,5 ք.մ. ավտոտնակ, 14 ք.մ. տնտեսական պահեստ, 10 ք.մ. հնոց, 8,64 ք.մ. լոգարան, 21 ք.մ. անասնաշենք եւ 0,13 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17450000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Աբովյան փողոց, 17 հասցեում գտնվող 145,2 ք.մ. բնակելի տուն, 32,32 ք.մ. անասնաշենք, 9,65 ք.մ. կաթսայատուն, 5,04 ք.մ. սանհանգույց, 26 ք.մ. կիսակառույց, 2 ք.մ. /3,2 խ.մ./ պարիսպ եւ 0,102 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Յ. Լեփսիուսի փողոց, 17 շենք, 20 հասցեում գտնվող 30,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Սպանդարյան փողոց, 16 շենք, 35 հասցեում գտնվող 75,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13900000 ՀՀ դրամ: Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են: Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.12.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 02.01.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում:

Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.akson.am կայքերը:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՆՁՆԵՆ 2 ԱՆԳԱՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պետական ավարտական քննությունների ժամանակացույցը եւ աշխատակարգը սահմանելու մասին ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը:

ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական եւ 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը:

4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

«Մայրենի» առարկայից՝գրավոր (թեստ).

«Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաեւ՝ «Ռուսաց լեզու» առարկայից՝բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.

Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաեւ՝ իրենց «Մայրենի լեզու եւ գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

Գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (առնվազն 4 տարբերակ) կազմում են հաստատության մեթոդ-միավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումն անցկացվում է հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝15 օրվա ընթացքում:

9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

«Հայոց լեզու» առարկայից՝գրավոր թեստ.

«Գրականություն» առարկայից՝բանավոր.

«Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր.

«Մաթեմատիկա» առարկայից՝գրավոր.

«Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝գրավոր (թեստ).

«Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» եւ այլ լեզուներ՝սովորողի ընտրությամբ) առարկայից՝բանավոր.

«Ֆիզկուլտուրա» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում).

Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար սահմանված գիտելիքների ստուգումն անցկացվում է նաեւ «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.

Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ գիտելիքների ստուգում «Մայրենի լեզու եւ գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

«Գրականություն», «Հայոց պատմություն» եւ «Օտար լեզու» առարկաների 9-րդ դասարանների ավարտական քննություններիտոմսերը կազմում են հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված եւ տրամադրված հարցաշարերի եւտոմսերիհնմուշների: «Գրականություն» եւ «Օտար լեզու» առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը եւ տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքները՝6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

9-րդ դասարաններում ավարտական քննություններն անցկացվում են հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝30 օրվա ընթացքում: 9-րդ դասարանի ավարտական քննություններ հանձնողների հայտերը հաստատության տնօրենը լրացնում եւ ԳԹԿ-ին է փոխանցում փետրվարի 20-ից մինչեւ մարտի 15-ը:

12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

«Հայոց լեզու եւհայ գրականություն» առարկայից՝գրավոր (թեստ).

«Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր (թեստ).

«Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ).

«Ֆիզկուլտուրա» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգարք) հունիսի 6-րդ աշխատանքային օրվանից մինչեւ քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում,

«Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր՝ (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) սովորողի ընտրությամբ՝ քննաշրջանի ընթացքում.

«Մայրենի լեզու եւ գրականություն» առարկայից բանավոր՝ (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ սովորողի ընտրությամբ՝ քննաշրջանի ընթացքում:

12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններն անցկացվում են հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝10 օրվա ընթացքում եւ հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:

12-րդ դասարանի սովորողը հունվար ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննությունը(ները), որը(որոնք) չի ընտրել եւչի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Հունվարին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչեւ դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին. հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 15-ից մինչեւ 30-ը՝ ժամը 12:00-ը, քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

Հունիսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչեւ ապրիլի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենն ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 2-ը ներառյալ՝ քննություններ հանձնողների դիմում-հայտերն էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին:

Միասնական քննությանը մասնակցող սովորողը պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Եվ հունվարին, եւ հունիսին միասնական քննություններ հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի ավելի բարձր դրական գնահատականը:

Միեւնույն առարկայից եւ միասնական, եւ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):

9-րդ եւ 12-րդ դասարանում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմում է ԳԹԿ-ն, առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից եւ հաստատությունում գործածվող դասագրքերից եւ (կամ) ձեռնարկներից:

12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ»

Միջազգային առեւտրային դպլատի հայաստանյան ազգային կոմիտեն Վերակառուցման եւ զարգացման եվրոդպական բանկի «Առեւտրի խթանման ծրագրի» շրջանակում սեմինար–քննարկում է անցկացրել Հայաստանի բանկային ոլորտի ներկայացուցիչների հետ:

Սեմինարի նպատակներից մեկը ոչ միայն տեղական, այլ նաեւ միջազգային դաշտում «կանաչ» առեւտրի ֆինանսավորման զարգացումն է, որի հետագա տարածման գործում շեշտվել է բանկերի եւ միջազգային ֆինանսական հաստատությունների դերը:

Միջոցառման շրջանակում «Ակբա» բանկի ՓՄՁ բիզնես-թիմի ղեկավար Մանե Պողոսյանը, անդրադառնալով «կանաչ» առեւտրի ֆինանսավորմանը, ընդգծել է, որ «Ակբա» բանկն իր գործունեության ավելի քան 25 տարիների ընթացում մշտապես մանրակրկիտ ուսումնասիրել է բանկի կողմից ֆինանսավորվող յուրաքանչյուր նախագիծ՝ ուշադրության կենտրոնում պահելով սոցիալական եւ բնապահպանական ռիսկերը:

«2011 թվականից սկսած՝ «Ակբա» բանկը ներդրել է սոցիալական եւ բնապահպանական ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնց միջոցով կարգավորվում է հաճախորդների գործունեության այն ոլորտները, որոնց բանկը չի կարող ֆինանսավորել կամ կարող է ֆինանսավորել սոցիալական եւ բնապահպանական ազդեցության՝ լրացուցիչ եւ ավելի մանրամասն վերլուծության դեպքում: Ինչ վերաբերում է կոնկրետ գործողություններին, ապա «Ակբա» բանկը եւ «ԱԿԲԱ» ֆինանսական խմբի անդամներից «Ակբա» Լիզինգն առ այսօր ֆինանսավորել են 20 միլիարդ դրամը գերազանցող ծրագրեր էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգիայի ոլորտներում: Մենք նախատեսում ենք մուտք գործել նաեւ «կանաչ» պարտատոմսերի շուկա»,- նշել է «Ակբա» բանկի ՓՄՁ բիզնես թիմի ղեկավար Մանե Պողոսյանը՝ հավելելով, որ 2016 թվականին «Ակբան» գործարկել է նաեւ համայնքային ֆինանսավորման գործիք, ինչը ենթադրում է՝ համայնքների կողմից էներգաարդյունավետ եւ վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների ֆինանսավորում:

«Ակբան» Հայաստանի խոշորագույն բանկերից է, որն առաջարկում է ունիվերսալ ֆինանսական ծառայություններ: Բանկը ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 63 մասնաճյուղ: 2021 թվականին իրականացված բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից հետո «Ակբա» բանկն ունի ավելի քան 5000 բաժնետեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԿՅԱՆՔԻՑ ԱՆԺԱՄԱՆԱԿ ՀԵՌԱՑԱԾՆԵՐԸ

Երբեմն մահն այնքան անողոք է զսնվում, որ տանում է վերեւ՝ առանց նրանց փառքի աստղը մինչեւ վերջ վառելու: Այդ ճանապարհը, ցավոք, չհաստատեցին վայելել հայկական շոու բիզնեսի մի շարք վառ անհատականություններ: Այսպիսով՝ այս անգամ ArmLur.am-ը անդրադարձել է այն հայ հայտնի աստղերին, որոնք կյանքից հեռացել են երիտասարդ տարիքում:

2021 թվականին կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ վաստակավոր արտիստ, կոմպոզիտոր, սիրո հավերժ երգիչ Հայկոն:

Նշենք, որ Հայկոն ամուսնացած է եղել երգչուհի Անահիտ Սիմոնյանի հետ, որդին՝Արմանը, 11 տարեկան է:

Նույն թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում մահացավ սիրված հաղորդավար Գեւորգ Եղիազարյանը:

2018 թվականին ծանր եւ երկարատեւ հիվանդությունից կյանքին հրաժեշտ տվեց հայ մեծ երգչուհի Նադեժդա Սարգսյանը:

2014 թվականին երկարատեւ եւ ծանր հիվանդությունից Ամերիկայի Միացյալ Նահանգներում կյանքից հեռացավ դերասանուհի Հասմիկ Ղարիբյանը:

2013 թվականին երիտասարդ տարիքում հիվանդանոցում կենաց ու մահու պայքարից հետո մահացավ հայտնի հաղորդավար, շոումեն Մարկ Սաղաթելյանը:

Նույն թվականին ավտովթարի զոհ դարձավ եւ անժամանակ կյանքից հեռացավ դերասան, ռեժիսոր Երվանդ Ենգիբարյանը:

2009 թվականին խոշոր ավտովթարի հետեւանքով երիտասարդ տարիքում զոհվեց «Որոգայթ» հեռուստասերիալի դերասան, 35-ամյա Գեղամ Ղանդիլյանը, ով հանրության շրջանում հայտնի էր (Գոքոր) անունով:

Իսկ, ահա 2006 թվականին համերգային շրջագայությունից վերադառնալու ճանապարհին ավտովթարի հետեւանքով զոհվեց սիրված երգչուհի Վարդուհի Վարդանյանը:

Նշեք, որ Վարդուհին ունի մեկ որդի, ով այս տարի ունեցել է դուստր եւ նրան անվանել մայրիկի անունով՝Վարդուհի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ 100-ԱՄՅԱԿԻՆ

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում մեկնարկել է Հայաստանում Ֆիլատելիայի եւ դրամագիտական շարժման հիմնադրման 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը:

Ցուցահանդեսի գլխավոր գործընկերն «Ակբա» բանկն է, կազմակերպիչները՝ «Ֆիլատելիստների հայկական ասոցիացիան», «Հայփոստ» ՓԲԸ-ն եւ ՀՀ Կենտրոնական բանկը:

Ցուցահանդեսի շրջանակում տարբեր դասային կարգերում ներկայացվում են «Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի» անդամ 25 ֆիլատելիստների հավաքածուները. ՀՀ Կենտրոնական բանկը ներկայացնում է Հայաստանում ազգային դրամի պատմության թեմատիկան, իսկ «Հայփոստն» ու «Արցախփոստը» ներկայանում են իրենց տարեկան թողարկումներով:

Ցուցահանդեսը կտեւի 4 օր եւ կավարտվի նոյեմբերի 18-ին:

Ցուցահանդեսի շրջանակում շրջանառության մեջ է դրվել նաեւ մեկ նամականիշ՝ նվիրված ««Ֆիլանում» (ֆիլատելիստների եւ նումիզմատների միություն) կազմակերպության 100-ամյակ» թեմային:

ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

ԿՐՏՍԵՐ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԳԵՐՇՔԵՂ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ինչպես գիտենք՝ նոյեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցավ Արամ Ասատրյանի որդու՝ Տիգրան Ասատրյանի ավագ որդու՝ Արամ Ասատրյանի հարսանեկան արարողությունը:

Տիգրան Ասատրյանի խոսքով՝ օրը հատուկ նշանակությամբ են ընտրել՝ 11. 11.22: Հարսանեկան շքեղ արարողությանը ներկա են գտվել Հայաստանից հայտնի դեմքեր, երգիչ-երգչուհիներ: Հարսանեկան արարողությանը ներկա էր նաեւ Արտաշ Ասատրյանը որդու՝Գրիշա Ասատրյանի հետ, չնայած այն խոսակցություններին, թե եղբայրները որոշ հարցերում ունեցել են տարաձայնություններ:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ամենահարուստ հնդիկ միլիարդատեր Մուկեշ Ամբանին ցանկանում է գնել անգլիական «Լիվերպուլ» ֆուտբոլային ակումբը: «Լիվերպուլի» սեփականատեր FenwaySportsGroup-ը պատրաստ է վաճառել ակումբը 4 միլիարդ ֆունտ ստերլինգով: 2010 թվականին ընկերությունը լիվերպուլյան ակումբի համար վճարել էր 300 միլիոն ֆունտ ստերլինգ: Ամբանիի հետ կարող են մրցակցել խոշոր ներդրումային ընկերություններ Պարսից ծոցի երկրներից եւ ԱՄՆ-ից: Ամբանին այժմ 10-րդն է Forbes-ի ցուցակում: Նրա կարողությունը 90 միլիարդ դոլար է:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Մոսկվայի «Դինամոյի» եւ Ռուսաստանի հավաքականի կիսապաշտպան Արսեն Զախարյանը հաստատել է, որ Լոնդոնի «Չելսին» շարունակում է իր հնարավոր տրանսֆերի հետ կապված գործընթացը:

«Հիմա չեմ մտածում «Չելսի» տեղափոխվելու մասին: Այդ մասին կարող եք հարցնել ակումբին եւ իմ ներկայացուցիչներին: Կարծում եմ՝ ամեն ինչ կարգին է: Բանակցությունները շարունակվում են, բայց բոլոր խաղաթղթերը չեմ բացի»,- ասել է Զախարյանը: Ամռանը կողմերը հասել էին համաձայնության, սակայն 19-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերը տեղի չէր ունեցել բանկային փոխանցման անհնարինության պատճառով: Մեծ Բրիտանիան պատժամիջոցներ է սահմանել Ռուսաստանի բանկային եւ ֆինանսական համակարգի դեմ: «Չելսին» պատրաստ էր Զախարյանի տրանսֆերի համար վճարել 12,6 միլիոն եվրո:

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» 37-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն բրիտանացի լրագրող Պիրս Մորգանին տված սկանդալային հարցազրույցում հայտարարել է, որ մանչեսթերյան ակումբը դավաճանել է իրեն:

«Ես զգում եմ, որ «Մանչեսթեր Յունայթեդը» դավաճանել է ինձ: Այս հարցազրույցը տալիս եմ, որպեսզի մարդիկ իմանան ճշմարտությունը: Այո, ես ինձ զգում եմ դավաճանված, այդպես է եղել նաեւ անցած մրցաշրջանում: Ակումբ վերադառնալուց հետո երեք մարզչի հետ եմ աշխատել: Ուլե-Գունար Սուլշերն իմ ընկերն է, նրա նկատմամբ միայն հարգանք եմ զգում: Ռալֆ Ռանգնիկը 10 տարուց ավելի մարզչական աշխատանք չէր կատարել: Այդ դեպքում ինչպես էր նա ղեկավարելու «Մանչեսթեր Յունայթեդը»: Ես նրա մասին նույնիսկ չէի լսել:

Էրիկ տեն Հագին չեմ հարգում, քանի որ նա էլ ինձ չի հարգում: Եթե դու ինձ չես հարգում, ես երբեք քեզ չեմ հարգի: Երկու մրցաշրջան է. բոլոր անհաջողությունների մեղավոր ինձ են ներկայացնում:

Պիկասոն ասում էր՝ որեւէ բան վերականգնելուց առաջ պետք է այն քանդել: Եթե ակումբը սկսի ինձնից, ոչ մի խնդիր: Ես սիրում եմ «Մանչեսթեր Յունայթեդը», երկրպագուներին, որոնք միշտ ինձ աջակցում են: Բայց եթե նրանք ցանկանում են առաջընթաց, պետք է շատ բան փոխեն»,- Ռոնալդուիխոսքը մեջբերում է dailymail-ը:

Նախորդ երկու խաղերում Ռոնալդուն հայտավորված չէր «Մանչեսթեր Յունայթեդի» կազմում: Նա Պորտուգալիայի հավաքականի կազմում կմասնակցի նոյեմբերի 20-ին Քաթարում մեկնարկելիք աշխարհի առաջնությանը:

● *Նոյեմբերի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա թատերական ներկայացում՝ «Արծվաբույն»: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ 19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որոնք են ընտանեկան նպաստ ստանալու իրավունքները եւ տրամադրման հիմքերը:

Գայանե Գրիգորյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող են սահմանվել ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, եւ ընտանեկան նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընտանեկան նպաստի չափը որոշվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող եւ ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող՝ 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:

Ընտանիքի 18 տարին չլրացած անդամի համար տրվող հավելման չափը տարբերակվում է՝ ելնելով տվյալ ընտանիքի անապահովության աստիճանից, բնակավայրից, ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թվից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ.Ինչպե՞ս ստանալ ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա:

Վահան Կիրակոսյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտատուները Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 22.12.2005թ. թիվ 2302-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 300 000 ՀՀ դրամ: Հայտատուն Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005169058 հաշվեհամարին վճարում է 300 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Թուրքիայի Անթալիա քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնության նախավերջին՝ 8-րդ տուրում, Հայաստանի ներկայացուցիչ Մարիամ Մկրտչյանն առավելության է հասել իռլանդացի Տրիշա Կանյամարալայի նկատմամբ եւ ժամանակից շուտ նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Վերջին տուրից առաջ Մկրտչյանը վաստակել է 7,5 միավոր եւ անհասանելի դարձել մրցակիցների համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: